Յուրի Պետրոսյան. Կոթողայնություն՝ փոքր չափերի մեջ

Սկսած 1967-ից, երբ ՀՀ վաստակավոր նկարիչ Յուրի Պետրոսյանն ավարտեց Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի քանդակի բաժինը, ձգվում է արվեստագետի ստեղծագործական չընդհատվող ուղին: Մինչ այդ նա սովորել էր Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում:

«Բախտի բան էր,– հիշում է կյանքի 7 տասնամյակները վաղուց բոլորած վարպետը,– լավ ուսուցիչներ ունեցա»: Անդրադառնալով քանդակի իր առաջին ուսուցիչ Սուրեն Նազարյանին՝ ասում է. «Նա անհատական մոտեցում ուներ յուրաքանչյուրիս հանդեպ: Մեր հիմքերը լավ դրեց»: Ընդ որում՝ «մեր» ասելով նկատի ունի իր տաղանդավոր համակուրսեցիներին՝ Արա Շիրազին, Հրանտ Հովսեփյանին, Երվանդ Գոջաբաշյանին, մյուսներին:

Գեղարվեստի ինստիտուտում ուսումնառության տարիներին կուրսի ղեկավարությունը ստանձնել է նշանավոր քանդակագործ և մանկավարժ Արա Սարգսյանը: «Մեր ուսուցիչները մեզ ուղղորդել են՝ առանց պարտադրելու»,– երախտագիտությամբ հիշում է Յուրի Պետրոսյանը: Ինքն, իհարկե, ափսոսում է, որ չի դասավանդում. «Ուղղակի չեմ կարող. ամեն մարդու տրված չէ մանկավարժի կոչումը»: Բայց այդ գործն այսօր հաջողությամբ «իրականացնում են» քանդակագործի ստեղծագործությունները՝ իրենց շուրջ սփռելով հայրենասիրություն, կամք և լավատեսություն: Այո՛, այս հատկանիշներն են ընդհանուր առմամբ բնորոշ նրա աշխատանքներին՝ քանդակներ ու գրաֆիկական թերթեր, դեկորատիվ ափսեներ ու կոլաժներ: 1992թ. բացված երևանյան անհատական առաջին ցուցահանդեսից հետո երկրորդը՝ հետահայացը, կազմակերպվեց ուղիղ 20 տարի անց՝ 2012թ. հոկտեմբերին: Բազմաթիվ նոր ստեղծագործություններ էլ քանդակագործի արվեստանոցում են. սպասում են իրենց հերթին:

Հինգ տասնամյակից ավելի Պետրոսյանը հետևողականորեն խորացնում է իր հաջողությունները նոր ձևերի յուրացման ասպարեզում՝ զարգացնելով նախասիրած թեմաները: Դրանք քանդակային սգերգերն են («Ռեքվիեմ») ու «Ողբեր» շարքը: Այս շարքերով հեղինակն ամենևին էլ նպատակ չունի հուսահատական տրամադրություններ առաջացնել: Ընդհակառակը՝ դրանք ուժեղ մարդ-անհատի,

ճակատագրի ծանր հարվածներ կրած ժողովրդի ոգու ամրության դրսևորումներ են, ապագայի հանդեպ հավատ ներշնչող կերպավորումներ:

Իրավացի է, անշուշտ, արվեստաբան Պողոս Հայթայանը, երբ նշյալ շարքերի ստեղծագործություններն անվանում է «ապրեցնող ողբեր»՝ հեղինակին բնութագրելով հետևյալ կերպ. «Վերջին կեսդարյա հայ արձանագործության բազմադեմ համապատկերում Յուրի Պետրոսյանի պլաստիկական նվաճումները իրենց մեջ կրում են ժամանակի առաջավոր միտումները, սակայն ավելի տեսանելի է նրա շեշտված ինքնությունը՝ բարձր հումանիզմի տարրերով, բանաստեղծական վերապլացումներով, մարդու և բնության հավերժական կապի անանց վկայություններով»:

Քանդակագործության ժանրային առանձնահատկություններն ու ընձեռած հնարավորությունները համեմատաբար ավելի սահմանափակ են՝ արտահայտելու շրջապատող իրականության բազմազան երևույթները: Ասվածը կարծես չի վերաբերում Յուրի Պետրոսյանին: Նրան հաջողվում է արծարծել այնպիսի «ոչ քանդակային» թեմաներ, ինչպիսիք են «Գիշերը», «Անուրջները», «Մտորումները» և այլն: Հիշատակենք այդ «Մտորումներից» մեկը՝ ստեղծված 1996թ.: Հաստաբեստ նստարանին թիկնած ու հայացքը դեպի վեր պարզած երիտասարդ կին է բնորդը, որը դիտողին համակում է խոհական տրամադրությամբ և երազային ապրումներով:

Քանդակագործը տարբեր նյութեր է օգտագործում՝ քար, հրակավ, բրոնզ: Հետաքրքիրն այն է, որ քար սիրելով հանդերձ քիչ է աշխատել դրանով: Նախասիրած նյութը հրակավն է, որը թրծվում է բարձր ջերմաստիճանի տակ: Ինչպես ինքն է ասում. «Դա ձևաստեղծման ավելի լայն հնարավորություններ է տալիս՝ թույլ տալով ասելիքդ ավելի լավ արտահայտել»: Նշված նյութը հաճախ թելադրում է մշակվածության չափը՝ թույլ տալով ստեղծել մի տեսակ ոչ ավարտունության պատրանք: Այն միաժամանակ նախաստեղծ շունչ է հաղորդում քանդակագործի կերտած կերպարներին: Մարդկային բեկբեկուն ֆիգուրների, իրանի ընդհատվող մասերի հետաքրքիր զուգորդումների միջոցով հեղինակը կարողանում է յուրովի տեղ հասցնել իր մտահղացումը:

1991թ. ստեղծած «Ռեքվիեմը», օրինակ, պատկերում է երկատված մարմնով մարդու, որն ավելի շատ երկատված հոգի է հիշեցնում: Նույն սկզբունքով է կերտված նաև «Զարթոնք» քանդակը (1987թ.). այն ունի խաչաձև կոմպոզիցիա և մեծ արտահայտչականություն: Ընդհանրապես, Յուրի Պետրոսյանի քանդակային լեզուն առանձնանում է գեղարվեստական պայմանականության ձևերի բազմազանությամբ և ընդհանրացված կերպավորման յուրահատկություններով:

Հետաքրքիր մի զգացողություն ևս, երբ թերթում ես 2012թ. ցուցահանդեսի առիթով հրատարակված նրա կատալոգը: Յուրաքանչյուր էջում կոթողային՝ մոնումենտալ հնչեղությամբ մի գործ է: Իրականում դրանք փոքրաչափ ստեղծագործություններ են՝ հաճախ 16-20սմ բարձրությամբ: Ու բոլորն անխտիր՝ հատկորոշվում են ներքին զորեղ լիցքերով և առնական շեշտվածությամբ: Մերօրյա սոցիալական պայմաններն են ստիպում մեր քանդակագործներին ստեղծելու փոքրածավալ քանդակներ: Յուրի Պետրոսյանը ևս բացառություն չէ:

Այդուհանդերձ նրա մոնումենտալ շատ աշխատանքներ այսօր զարդարում են մեր քաղաքներն ու գյուղական բնակավայրերը: Ուշագրավ են ճարտարապետական շինությունների հետ քանդակային համադրումների պետրոսյանական փորձերը (Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի ճակատի, Գյումրիի դրամատիկական թատրոնի շքամուտքի, Սևանի ու Եղեգնաձորի մշակույթի տների ճակատամասերի հարթաքանդակները):

1999թ. մեր մայրաքաղաքը հարստացավ ընդհանրական լուծումներով արված հիասքանչ մի քանդակով («Արամ Խաչատրյան»)՝ դրված ֆիլհարմոնիկ մեծ դահլիճի առջևի հրապարակում: Հանճարեղ կոմպոզիտորը քանդակված է ներշնչանքի պահին՝ նստած բազկաթոռ դարձած կենաց ծառին: Գրավում են արձանի մոնումենտալ ու դեկորատիվ տարրերի ճաշակով զուգորդումը և միջավայրին գեղարվեստական շունչ հաղորդելու հեղինակի կարողությունը: Չմոռանանք նշել, որ մտահղացումն իրագործվեց մոսկվայաբնակ գործարար Սենիկ Գևորգյանի հովանավորությամբ: Վերջինիս նյութական սատարի արդյունքում տարիներ անց Կամերային երաժշտության տան հարևանությամբ վեր խոյացավ ևս մեկ արձան՝ Հովհաննես Այվազովսկու հուշարձանը:

Քնարական ընդգծված մեղմությամբ է աչքի ընկնում հեղինակի մեկ այլ ստեղծագործություն՝ «Պար աղավնիով», որ գտնվում է «Պրոմեթեյ» բանկի կենտրոնական գրասենյակի մոտ: Այն քանդակված է տերևանման կոմպոզիցիայով, որի կենտրոնում հոլանի բազուկներով կին է՝ պարային նազանքով ու աղավնաթև սլացքով: Երաժշտական թեման միշտ է հետաքրքրել անվանի քանդակագործին: Չնայած առաջացած տարիքին՝ Հանքավանի «Նաիրի» համալիրի տարածքում վերջերս նա ստեղծեց հայ ազգային նվագարաններին նվիրված քանդակային «նատյուրմորտների» մի ամբողջական պատկերաշար, որի արդյունքում տարածքը վերածվեց երաժշտական այգի-թանգարանի:

Յուրի Պետրոսյանի նոր աշխատանքներում մեծ թիվ են կազմում դեկորատիվ ափսեները, որոնք իրենց ոճային առանձնահատկություններով և խորքային-ծավալային լուծումներով նորություն են մեր կերպարվեստում: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև արվեստագետի գրաֆիկական թերթերն ու կոլաժները: «Մինչև քանդակային էսքիզ ես անում, անկախ քեզանից ծնվում է գրաֆիկական գործ: Մեկը մյուսին օգնում է,– պատմում է հեղինակը և շարունակում- Այլ ժանրով ստեղծագործելը քեզ հեռացնում է ֆորմաներից»: Որքան էլ հեռացնեն, միևնույն է, «քանդակային» են Յուրի Պետրոսյանի նաև ոչ քանդակային ստեղծագործությունները: Այդպիսին է արվեստագետի գեղարվեստական մտածողության կերպը, նրա ներքին էությունը, որի արտաքին դրսևորումներն այսօր ցուցադրվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում և այլուր:

Լևոն Լաճիկյան